

ԼՈՒՄԻՆԵ ՏՈՆՈՅԱՆ

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐՆ ՈՒ ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԸ ՓԱՐԻԶԻ «ՄԵՆՔ» ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Ֆրանսիայի հայկական կղզյակում ձևավորված Նահանջի գրական ուղղության մեջ կենսական դեր սպանձնեց «Մենք» հանդեսը: Այն յուրօրինակ ձայն էր, որ դարձավ 30-ականների սկզբին միակ հայկական գրական շարժման խոսափող: «Մենք»-ի ամբիոնը նոր, սթափ, ոգեշունչ ավյուն պիտի բերեր ուժացման նախանշաններ ապրող գաղթաշխարհի գրականությանը: Այն գրական հեղափոխություն էր, իր փեսակի մեջ՝ եզակի: Նոր շարժումը գրականության ավանդական, կաղապարային ընկալումների, ժանրերի, ուղղությունների հեղափոխություն էր: Ըստ էության՝ այն գալիս էր ընդդիմանալու փրող գրական մրաժողությանը՝ Կարոտին:

«Մենք» խմբակն առաջ շարժվեց 1927-ին Փարիզում հիմնադրված «Հարդգող» գրական խմբի բացած արահեկով: «Զուարթնոց»-ի խմբագիր Նրանյու Բալույանը փաստում է, որ «Հարդգողը» «...ամեն հինգշաբթի գիշեր կը սարքեր կանոնավոր կերպով գրական ու վիճաբանական երեկոներ»¹: Հափկանշական է, որ «Մենք»-ով հիմնովին փոխվեց գրականության հունը. երիտասարդները որոշեցին գրականություն բերել իրենց կողքին ապրող ու «պայքարող» հերոսին: «Փարիզի փղաքը չմօտեցան պահածոյի գրականության»², - Կարոտի ուղղության նոր ու անսովոր բնութագրումով եզրակացնում է հոդվածագիրը:

Ժամանակի Սփյուռքի գրական նման սուր փայտանումներն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում մի հանգամանք եւս՝ Փարիզի «փղոց» բերած ժանրային փոփոխությունների պարագան: Նրանցից առաջ ավելի մշակված էր փոքր արձակը, որը հնարավորություն չէր տալիս համակողմանիորեն քննել Սփյուռքի առջև ծառացած հարցադրումները: Փարիզը սփյուռքահայ գրականության ձևավորման վաղ շրջանում արդեն դարձավ մեծ ծավալի գրական գործերի հայրենիքը՝ վստահություն հաղորդելով շարժմանը: Այսպե՛ս էլ ա՛յս օրերին գրվեցին սփյուռքահայ գրականության լավագույն վեպերը՝ «Նահանջը առանց եր-

1 «Զուարթնոց» ամսաթերթ գրականության եւ արուեստներու, Փարիզ, 1958, 15 հոկտեմբեր, Գ. փարի, թիւ 4-5:

2 «Զուարթնոց», Փարիզ, 1959, 15 Յունուար, Գ. փարի, թիւ 6-7:

գի» (Շահան Շահնուր, 1929), «Փորձը» (Զարեհ Որբունի, 1929), «Արև, արև» (Փայլակ Միքայելյան, 1933), «Մեր կյանքը» (Նրաչ Զարդարյան, 1934): Սրանք իրենց ժանրային փոփոխությունից զարմացնել կարևոր գրական նոր հայացք բերեցին հայ գրականության մեջ: Այս վեպերը նոր ուղի բացեցին դեպի Ի. դարի եվրոպական գրականություն: Նայ գրականության մեջ զգացականը րեղը զիջեց բանականությանը:

Ֆրանսահայ արձակին րրված արժեքավոր գնահատանքով է առանձնանում Լ. Վարդանը՝ գրելով. «Ֆրանսահայ արձակը երբ երգեց հայ մարդը՝ երգած եղաւ մարդն ընդհանրապէս, երբ երգեց հայրենիքը, երգած եղաւ ամբողջ աշխարհը, եւ երբ արտայայտուեցաւ շրթներովը հայ մարդուն, արտայայտւած եղաւ իմացական ծանրութիւնը միտքին»³:

Վիպագիրները, մասնավորապէս Շահան Շահնուրը, առաջինն էին, որ հնչեցրին նահանջի ահագանգը: Նրանք մաքրանշեցին, որ հայը օրար եզերքում, հեռու ազգայինը սնուցող ավանդույթներից՝ կորցնում է լեզուն, մրաժողությունը: Այս պարագային խոցելի էր հարկապէս երիտասարդ հայի արժեհամակարգը: Նա կանգնած էր սիրո, սեռի, ազգային ու համամարդկային արժեքների երկրն րանքի առջև: Եւ ողբերգականն այն էր, որ իրենց կերպած գրական կերպարների պէս իրենք էլ պիտի գոհ գնային ուժացման ակնհայտ սպառնալիքին՝ Փարիզի գոհներին, ազգային շերտերի կրրուկ նահանջին:

Անդրադարձ կատարելով 10-ական թվականների արեւմտահայ գրականության մեջ կենսական դեր ունեցող մեհենական շարժման եւ արդեն 30-ականներին ֆրանսահայ իրականության մեջ ձեւավորված «Մենք»-ի գուգահեռին՝ Ս. Դանիելյանը գրում է. «Եթէ րասական թթ. մեհենականները ձգրում էին հայ հոգու փնրորութիւն, ազգային «հեթանոս» աագանի մէջ գեղեցիկի ու ագարութեան խորհորդները յայրնաբերելուն, «մենքեան» շարժումն այլեւս ապաինում էր համաշխարհային գրական միասնական ընթացքին՝ նրա մէջ որսալով ազգային գեղագիտական հասունացման «ահեղ ճշմարտութիւնը»⁴:

Ըստ հայրենի գրականագետի՝ արեւմտահայ ավագ գրչեղբայրների «հեթանոս» ավանդների շարունակականության դրոշը սփյուռքահայ գրականության մեջ Վագգեն Շուշանյանինն է: Սիրո «վրանբաց» շեփորումը զգացումի ագարության կոչնակն է, որը անվերապահորեն պաշտպանում էր Վ. Շուշանյանը:

3 Լ. Վարդան, Ակնարկ ֆրանսահայ եւ ամերիկահայ արձակին վրայ, Պէյրոթ, 1969, էջ 18:

4 Ս. Դանիելյան, Միջուկի րրոհումը: Սփյուռքահայ գրականութեան պարմութիւն, Ներածութիւն, գիրք 1, Երևան, 2011, էջ 171:

«Մենք» գրական շարժման ձևավորման շարժառիթի մասին այսպես է դա-
րում Ա. Ավագյանը. «Սփյուռքահայ գրականության մեջ իշխող կորուստների
ու պարությունների փրամադրություններին, 30-ական թվականներից սկսած,
փոխարինելու էին գալիս հուսալքմանը դիմակայելու շեշտադրումները, ինչը
շար ուղղակի ձևակերպվեց 1931 թ. Փարիզում հիմնադրված «Մենք» հանդեսի
առաջին համարում»⁵: Սրա կողքին միայն մեկ անհրաժեշտ հավելում. «Մենք»-ը
դարձավ հուսահատ հայ երիտասարդի ձուլման դեմ պայքարի հավաքով լցվե-
լու ավերաբեր թոշունը:

Առաջին հերթին զարմանալին այն էր, որ անհայրենիք փղաները, բոլորո-
վին փարբեր «օրենսդիր» ճաշակի փեր, գրականության «հակառակ բեռնե-
րում» հանդես եկող, մի կողմ դրեցին անձնական բոլոր քմահաճությունները,
համախմբվեցին և ստորագրեցին գրական հանգանակի փակ: Փարիզյան այս
հանդեսի շուրջ մեկտեղվեցին Նշան Պեշկեթյանը, Ղեոնդ Մելոյանը, Նրաչ
Սարգիսյանը, Ռաֆայել Զարդարյանը, Նարություն Ֆրենկյանը, Ոսրանիկը,
Գ. Գեղարքունին, Նիկողոս Սարաֆյանը, Բյուզանդ Թոփալյանը, Փայլակ Մի-
քայելյանը, Արշամ Տափրյանը, Զ. Մ. Որբունին, Շահան Շահնուրը, Վազգեն
Շուշանյանը, Շավարշ Նարդունին⁶: Գրականագետ Գեղամ Սեւանի դիտարկ-
մամբ, սակայն, այս պայծառ անուններից շարքերը «վերադարձան այնպեղ, որ-
պեղից սկսել էին և նույնիսկ ավելի խրվեցին ազգայնամոլության ախարի մեջ»⁷:
Նրանք չկարողացան ազգաբարձրվել Կարոտի ծանր բեռից. «Այդ սերնդից միա-
կը՝ Վազգեն Շուշանյանը, մնաց պարսնեղի վրա և շարունակեց ըմբոստացումը
մինչև իր մահը»⁸, - շարունակում է Գ. Սեւանը:

Ժամանակակից գրականագետ Պեպո Սիմոնյանը ծավալուն հոդվածով
է հանդես եկել «Մենք»-ի փերի ու դերի մասին: Նա համոզմունք է հայտնում,
թե փարիզահայ մրավորականությունը, որ այդ օրերին առաջ էր շարժվում
«աւանդական ակօսներով ընթացող հունին մէջ», կարողացավ սթափ դա-
րել և պահպանելով իր ազգային գրականության հանդերձը՝ վերցրեց օրարի
կողմից հրամցված «նորը, արդիականը, յառաջապահը»⁹: Իսկ «Մենք»-ի դե-
րի նշանակալիությունը այսպես է ընդգծում գրագետը. «Մենք»ը իբր շարժում
և գեղագիտական նոր մրածողութիւն իր իրայարուկ փերը կը գրաւէ Սփիւռ-
քահայ գրական մամուլի պարսմութեան մէջ: Իրայարուկ փեր մը, որ սրեղծա-
գործական բերքէն աւելի կը յարկանշուի իր նորանոր շունչով: Սփիւռքի հոգե-

5 Ա. Ավագյան, Պարկերագար պարմություն Շահան Շահնուրի, Երևան, 2007, էջ 132:

6 Տեն «Մենք» պարբերական գրականութեան և արուեստի, Փարիզ, 1931, թիւ Ա., էջ 3:

7 Գ. Սեւան, Սփյուռքահայ գրականության պարմության ուրվագծեր (1920-1945), Երևան, 1980, էջ 35:

8 Անդ:

9 «Նայկագեան Նայգիարական Նանդէս», Պէյրուք, 1992, հ. ԺԲ., էջ 210 (փեն Պ. Սիմոնեան, «Փարիզի
«Մենք»-ին փերը Սփիւռքահայ գրական մամուլի պարմութեան մէջ» հոդվածը, էջ 209-226):

խառնությունը նշող գրական-գեղագիտական նոր հայեցողությամբ: Միևնույն ժամանակ լինելության որոնումով»¹⁰: Քննադատը «Մենք»-ի դերը չի փնտրում միայն գրական մամուլի պարսպանի գարգացման փորձերում, այլ ընդգծելով պարբերականի կարգավիճակը «յեղափոխության» նշանակությունը, հասցնում է մինչև գրական շարժման ասպիճանի: Ներառելով, հանդես-ամբիոնը հիմնովին շրջեց սփյուռքահայ գրականության ընթացքը: «Մենք»-ի քննադատական բաժնի մասին խոսելիս Պ. Սիմոնյանը գրում է, որ հայ երիտասարդ գրողներն առաջ էին շարժվում եվրոպական գրաքննադատության բացած ուղիով. «Մենք»-ը յաջողած է քննադատական մրավորության փառքը հակիրճ նույնքան կոտ եւ խիստ կառույց մը, որ դասական ըմբռնողության շարաքանդակներն էին հրաժարում մըն է»¹¹: Գրադատը եզրակացնում է, որ «Մենք»-ի նորարարությունը չի հատկանշվում բացառապես քննադատական նորովի մրավորությամբ, այլ «երեցներու հանդեպ բացասականությամբ»¹²: Սրանով են պայմանավորում պարբերականի շուրջ սրելոված հակասական փրամադրությունները:

Նույն ժամանակահատվածում ուշադրությամբ քննել է Շ. Շահնուրի եւ Վ. Շուշանյանի՝ «Մենք»-ի էջերում տպագրված նյութերը: Ու ինչպես վկայում է նա, «Մենք»-ի գեղարուեստական արձակի երկու փրական դեմքերը կը հանդիսանան Շահան Շահնուրն ու Վազգէն Շուշանեանը»¹³: Իսկ մեր ընդգծմամբ՝ երկու բեռները:

Նա գրում է, որ Վ. Շուշանյանի «զգայացունց» անդրադարձումները ժամանակի գրական սրելածագործություններին բխում են նրա՝ տպավորապաշար դպրոցի ներկայացուցիչ լինելու փաստից: Այսպիսով ընթերցողը փնտրում է Շուշանյանի գոհունակությունը եւ նույնքան կրքով, որքան՝ դժգոհությունը: Նա համոզմունք է հայտնում, որ «Մենք»-ի ձեռքբերումը հատկապես արձակի մարգարէն է. «Մենք»-ի արձակ սրելածագործական էջերու բերքը աւելի ճոխ ու բեղուն է՝ որակ մը յարկանշող նուաճումով»¹⁴: Պ. Սիմոնյանը նշում է, որ այս բաժնում են առաջին անգամ լույս տեսել Շ. Շահնուրի պարմվածքներից չորսը, որոնցից «Պոյնուզըներ»-ի առիթով կարծում է, որ «չէ մարսուած Շահնուրի յանդգնութիւնն ու յամարձակութիւնը»¹⁵, եւ որ ժամանակակիցները, ենթակայական ու անճիշտ որակումներով հանդես գալով, հասան ընդհուպ հանդեսի փակմանը:

Անցյալ դարակեսի մերձավորարեւելյան հայաշխարհի արձակագիր Էդուարդ Պոյաճյանը, ընդհանրացնելով «Մենք»-ից ստացած իր տպավորությունները, այն դիրքորոշումն է հայտնում, թե սա հեղափոխություն էր՝ փայլաբա-

¹⁰ Անդ, էջ 226:

¹¹ Անդ, էջ 216:

¹² Անդ, էջ 217:

¹³ Անդ, էջ 225:

¹⁴ Անդ, էջ 224:

¹⁵ Անդ, 226:

կող ու ջղային: Նրա խոսքը երբեմն-երբեմն գեղարվեստական պատկերներով է շղարշվում, սակայն խորքում պահպանում է քննական հայացքի սրություն ու սթափություն: Է. Պոյաճյանը բանաձևում է. «Քերթուած մըն էր. գլուխ-գործոց մը ինքնին: Ուրացումի իր կամքովն իսկ, Փարիզի դժգոհներու խմբակը խօսեցաւ գրականութենէ մը, որ իր դժգոհութենէն առաջ կը թուէր նուազ ծանր, նուազ ներկայ, նուազ ուշագրաւ: Մերժելով արժեւորեց հինը, հայիռելով անոր՝ ծանօթացուց զայն եւ քարոզեց: Սպաննել ուզելով՝ կարծես կեանք աւելցուց անոր կեանքին»¹⁶:

Տարբեր մոտեցումներ կային հրապարակի վրա, սակայն անդուլ եւ միասնական էր նոր գրականություն սրելով եւ ջանքը:

Փարիզի «Կրդաների» միասնական հայացքի ձգքումներում անհապականության պահպանումն էր: Նրանք նախապես կանխորոշել էին կենսական նշանակություն ունեցող մի սկզբունք՝ հանդուրժողականություն, ինչն էլ հետագայում չկարողանալով պահպանել՝ բաժանվեցին:

Պարբերականի առաջին էջում շարադրված դրույթների գաղափարաբանությունը կանխանշում էր հետևյալ զարգացումները. «Մեր համերաշխությունամբն ու համագործակցութեամբն իսկ, որ երբեք չպիտի խափանէ իւրաքանչիւրիս անհապականութեան ազաւր ու լրիւ զարգացումը, շաղախ հանդիսանալ չորս ափերով ցրուած երկրասարդ գրողներու միջն ու այդպիսով դիւրացնել հայ նորագոյն գրականութեան ազաւր զարգացումն ու ծաղկումը»¹⁷, որոնց սակայն չհետևեցին:

Նակառակ իրենց կոչերի, այն է՝ «Մենք»-ը դարձնել ողջ Սփյուռքի գրամշակութային նշանակալից կենտրոն, նրա ազդեցության շրջանակը Փարիզի սահմաններից այդքան էլ դուրս չեկավ, իսկ այսօր էլ չափազանց կարճ կյանք ունեցավ, ընդամենը՝ հինգ համար: Թեև նկատվեց, որ շարժման զարգացումների արձագանքը շուրջով իր հետագիծը թողեց Մերձավոր Արևելքի երկրներում:

«Մենք»-ի առաջին համարում ծրագրային դրույթներով հանդես եկավ պարբերականի հիմնադիրներից Նիկողոս Սարաֆյանը: Նրա հոդվածի հիմքում օտար երկնքի փակ մի նոր «հոգեկան հայրենիքի» սրելծումն էր: Բանաստեղծը «Օտար երկիրներուն մէջ» հայրենված հային կոչ էր անում մրաժել «Նայու պէս» ու գիտակցում էր, որ ազգային ցրոնքը դարձավ մեր ժողովրդի անհաջողություններից ու հաջողություններից շարերի պարճառը¹⁸: Կանխապեսնելի էր, որ այս շարժումը «պարսկերէնը պիտի քանդէր», «անցյալի հետ հաշիվները պիտի մաքրէր», ուստի Ն. Սարաֆյանը փորձ արեց «հանդարտեցնել» ժամանակի

16 Է. Պոյաճյան, Դեմքեր, հ. Ա., Պէյրոս, 1966, էջ 352:

17 «Մենք», թիւ Ա., էջ 3:

18 «Մենք», թիւ Ա., էջ 42 (տե՛ս Ն. Սարաֆյան, «Մերունը» հոդվածը):

ազգայնական մամուլին՝ հայտարարելով, թե իրենք ոչ թե մեղադրող պիտի լինեն, այլ ծանր ու թեթև անող. «Հայհոյանք չէ որ պիտի նկատեն հետևաբար չորս դի և ո՛չ ալ մաղձ: Անոնք պիտի կշռեն, բնական է, մեծ ու պզտիկ բոլոր արժեքները՝ իրենց մասնաւոր աշխատանոցին մէջ և իրենց յայտուկ գործիքներով»¹⁹:

Եթե Ն. Սարաֆյանը փորձում էր գրնել գաղութների միջև «ներքին, խորունկէն գացող կապը»²⁰, արեւմտահայ փոհմիկ պորպալարը, ապա Վ. Շուշանյանը, որ ընկերների հաղորդամբ «Մենք»-ի գապանակն էր, «ջապագովում էր բռնությունը». «Ինչ որ գեղեցիկ է այսօր, բռնութիւնն է, սքրագան, արարչագործ ու երիտասարդ՝ որ ամբոխներու ծովածաւալ ու սեւ փարածութեան վրայէն, ցոյց կուտայ իր բիրտ ու շքեղ դէմքը: Մինչև որ կործանին այս բոլոր անվաւեր արժեքները, փլուզումը ըլլայ վերջնական - մինչև որ յաղթանակենք»²¹: Նկատելի է, որ Վազգեն Շուշանյանի ստորագրությամբ բոլոր նյութերը խիստ փարբեր են նրա գեղարվեստական գործերից. լուսավոր ապագայի փեսականով պայքարի կոչ են, հեղափոխական ոգի ու հաղթանակի խոսքում:

Ազգայության գաղափարը հայ գրականության մէջ բոլոր ժամանակներում առաջնորդել է մրքի լավագոյն մշակներին: Դեռ 1858-ին Միքայել Նալբանդյանն իր «Նկատողութիւնք» նշանակալից հոդվածում արծարծում է պատերազմով առաջ շարժվելու գաղափարը: Հրապարակագրի համար այն սրանում է կենսական նշանակություն ու դառնում կյանքի շարժիչ ուժ: Ազգայության երգիչը գրում է. «Օրինյա՛լ է պատերազմը. թո՛ղ լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»²²: Նալբանդյանի համար կենսականը, սակայն, սոցիալական արդարության կռիվն է, հեղափոխական դեմոկրատների ճամբարից հնչող մարտակոչերին ընդառաջ գնալու վճռականությունը:

Եթե Մ. Նալբանդյանը պատերազմ բառը գործածում է նրա բառարանային առաջին իմաստով, ապա Վ. Շուշանյանը, ելնելով իր օրերի մարտահրավերներից, օգտագործում է այս բառի պայքարել, մաքառել, դիմակայել նրբիմաստները՝ ազգային ավագանի նշանառությամբ:

Մարտական ոգով փոգորված, հավարի անհուն ուժով լցված երիտասարդ գրողը հիշեցնում է, որ կարևորը գոյությունը քարշ փալով, աներազ ապրելը չէ, այլ հաղթանակի ձգտմամբ առաջ շարժվելը, որը գունավորում է համապարած գորշությունը: Եւ հավելում է, որ նրանք, ովքեր չեն փեսնում սոսկ գոյատևելու և պայքարելով վեր բարձրանալու փարբերությունը, արժանի են «խուլ փառապանքներու և յաւիտենական գերութեան»²³:

19 Անդ:

20 Անդ, էջ 43:

21 Անդ, էջ 27 (տե՛ս Վ. Շուշանեան, «Ու կը ջապագովեմ բռնութիւնը» հոդվածը):

22 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1980, էջ 321:

23 «Մենք», թիվ Բ., էջ 88 (տե՛ս Վ. Շուշանեան, «Վասն փարածութեան և յաղթանակի» հոդվածը):

Նույն մրաժույթը փեսնում ենք նաև արձակագրի «Խառնիխումն» գործում, սակայն մի նուրբ սրբագրումով. ներուժությամբ, հաղթանակով, կրքով ապրելով հանդերձ՝ «անհայրենիք» հայ երիտասարդը պետք է բռնուցքի մեջ սեղմի դառնությունն ու ծարավը, և դժվարությունները միայն իրեն պիտի փեսանելի ու ճանաչելի լինեն²⁴:

«Փարիզի փողոց» ամենից կենսահորդ գրողի²⁵ Վ. Շուշանյանի համար առաջին հերթին այդ ոգին կինն է. բոլոր գեղարվեստական գործերում փնտրում է սիրո և արկածի ծարավ կնոջը: Սակայն մենքյան հողվածներից մեկում, այդ օրերի իր «ռազմի» փրամադրությանը համահունչ, հայտարարում է. «Մենք էգ գայլերու պէք ունինք՝ որ քինախնդրութեամբ դիեցնեն մեզ և ո՛չ թէ հաճոյքի գործիքներու»²⁶: Այնուհետև վրիժառության նույն շնչով շարունակում է իր մարտահրավեր-կոչը՝ ուղղված երիտասարդ սփյուռքահայերին. «Ներկայ եղիր, կարողութեամբ, երիտասարդութեամբ, ճշդապահութեամբ: Վասնզի ժամն է գորակոչի: Ահա սրբազան ժառանգութիւնը վրանգի փակ, արիւնը կարմիր ու փաք նուաստութենէ վիրատր, հինաւորց, այլ և երիցս յեղափոխական ժողովրդի մը՝ որ կը բողոքէ երակներու մէջ և որուն վրիժառու կրողը պիտի ըլլաս»²⁷:

Ռոմանսիկ է, անշուշտ: Վ. Շուշանյանը պատրանքի՞ն է փրկած, իհարկէ: Բայց պայքարի այս «գործիքները» գրողն անհրաժեշտ է դիտում ազգային թելադրական նշանառությամբ:

Այսպէղ Շուշանյանը հավատում է իր ժողովրդի ներուժին, պայքարի ոգուն, որ գալիս է դարերի խորքից: Ներաբրքի մի դիտարկում եւս. Վ. Շուշանյանը, հակառակ վերնուշի գրականության ջատագովությանը, հանդես է գալիս նաև Նահանգի դիրքերից, կարծես ինքն էլ է հոգնել՝ անընդհար վերապրելով արհավիրքի փեսարանները. «Պէք չէ որ կենդանի մեռելները խանգարեն մեր ողբերգական գնացքը»²⁸: Այսպէղ ինքն ու Շ. Շահնուրը միասնական ելակետ ունեն. հիշենք թեկուզ «պարապի» գնահատության շահնուրյան փորձը՝ «Յարալէզներուն դաւաճանութիւնը» պատմվածքում:

Ի փարբերություն Վ. Շուշանյանի կարուկ մտրեցումների՝ Շ. Շահնուրը «Մենք»-ում հանդես եկավ գեղարվեստական գործերով: Պարբերականի Ա. համարում ներկայացրեց «Լիքսէնպուրկի պահապանները» պատմվածքը²⁹: Նե-

24 Տե՛ս Վ. Շուշանյան, Խառնիխումն, էջ 217:

25 Տե՛ս Մ. Իշխան, Երկեր, Երևան, 1990, էջ 568:

26 «Մենք», թիւ Բ., էջ 91 (փեսն Վ. Շուշանյան, «Ու ներկայութեան ընդդէմ բոլոր փախուսքներուն» հողվածը):

27 Անդ:

28 Անդ, էջ 92:

29 «Մենք», թիւ Ա., 8-11 էջ:

յրագայում պարմվածքը վերաբաղեցնում ենք «Լիբստեյնայորկի պահապանը» և ձոնեց իր բարեկամ Գուրգեն Մահարու հիշարարկին:

«Լիբստեյնայորկի պահապանը» պարմվածքի բուն գաղափարը խորքով հոռետեսական է, սակայն արտաքուստ այն պարզ, զվարճալի սյուժե ունի: Այսպիսով, ինչպես «Յարալեզներուն դաւաճանութիւնը» ժողովածուում, գերիշխում է Շ. Շահնուրին բնորոշ առողջ ու սուր հումորը: Դեպքերին և երևույթներին նման դիպրանկյունից նայելը, ի դեպ, ներհայրուկ էր նաև Գ. Մահարուն: Պարմվածքի հերոս Էմիլը Լյուբստեյնբուրգի պարտեզում, որ խորհրդանշում է ֆրանսիական գրական միջավայրը, մահարձանները մաքրող, հղկող, շրկող բանվոր է: Նա կարարում է սոսկ արտաքուստ երևացող ուղղումներ, ուշադիր է բոլոր քանդակների նկարմամբ: Այդպես նաև հայ արվեստագետը օտար գրական փառածքում կարող է սոսկ «բանվորի» գործ կատարել՝ առանց թաքուն հույսի, որ այդ պառնասում իր «կիսանդրին» կունենա: Գաղափարախոսության հիմքում կրկին Շահնուրի համար այնքան կարևոր հարցադրումն է. ո՞ր ազգային արժեքներն են, որ պիտի պահպանվեն և փոխանցվեն սերնդեսերունդ, և ովքե՞ր այդ «սուրբ» գործը պիտի կատարեն: Պարասխանը միանշանակ է. օտար ավերում ապրող «պահապաններն» այլևս «պարապ» են, քանի որ պահպանելու արժեք չի մնացել:

Գաղափարական այս մրաժումը կարմիր թելի նման անցնում է նաև «Մենք»-ի վերջին համարում Կարաբաբեյի «Պճեղ մը անուշ սիրտ» պարմվածքում, սակայն մի սրբագրումով՝ Եպրաքես հանրմը գիտի, թե հայը ազգային ինչ արժեքներ ունի սերունդներին փոխանցելու: Նայ մամիկի փազնապը փոխանցողին չգտնելու մեջ է: Շ. Շահնուրն այս պարմվածքում շարունակում է հյուսել «Նահանջ»-ի նյութը՝ առավել շեշտադրելով անվերապահորեն ձուլվելու գաղափարը: Նորայր Կարապետյանը, չկարողանալով դիմակայել ուժացման մարտահրավերներին, ինքնասպան է լինում՝ այդ քայլով մարմանշելով, որ որքան էլ Եպրաքես հանրմի նման «պճեղ մը անուշ սիրտ» ունեցող հայը փորձում է պահպանել ու սերունդներին փոխանցել ազգային ոգին ու սովորույթները, միևնույն է, չի կարող պայքարել ուժացման դեմ:

Գաղափարակիր հերոսը փարագրության ուղին բռնած հայ կինն է: Նա վերապրող սերնդի հավաքական կերպարն է: Օտարության մեջ հայը խնդիր ունի «չկորսվելու», պահպանելու ազգային արժեքները, լեզուն: Այսպիսով հայկականության խորհրդանշիչ է առաջին դրվագում երևացող «խոշոր ծրարի» մեջ փաթաթված արևելյան գորգը, ինչը հայ կնոջ հետ է պարմվածքի ամբողջ ընթացքում: Սակայն վերջին փեսաբանում արդեն Շ. Շահնուրը, կրկին դիմելով խորհրդանշիչների օգնությանը, կառուցում է հետևյալ պարկերը. երբ Նորայրի

բնակարանի պարզգամբում, Եպրաքես հանրմը վերջապես գրել էր հարմար պահը գորգը «թոթվելու», ուրքը սայթաքում է, մի կերպ է կարողանում «կառ-
ջել», որպեսզի վայր չընկնի, ձեռքից սահեցնում ու աղբի մեջ է գցում արևելյան
գորգը. «Ներս անցաւ առանց գորգի: Ան վար հասած էր արդէն ու կը հանգչէր
երկու աղբամաններու միջեւ»³⁰: Արդյո՞ք սա է ազգային արժեքների վերջնական
հանգրվանը...

Այսպէղ արձակագիրը թերեւս նկարի ունի այն, որ չնայած հայտիին, ի
տարբերություն Նորայրի, կարողացավ իր ֆիզիկական գոյությունը պահպանել,
բայց հայկականությունը, այնուամենայնիվ, կորցրեց: «Մաքրասեր» հայ մայրը,
հակառակ իր կամքին, ազգային արժեքը գցեց օտար աղբակույտի մեջ եւ «պա-
րապ, պարապ սեւ լաթի» դարարկությունը չզգալու համար մեջը դրեց սպիտակ
բարձ: Սա եւս պարահական չէ: Շ. Շահնուրը սրանով ցույց էր տալիս, որ հյու-
րընկալ, բայց օտար մշակույթը կարող է իրենց համար արտաքուստ ապահով
հանգրվան լինել, բայց՝ անգույն, անհոգի ու անարյուն:

«Պարապ սենեակի պարճառաւ» պարմվածքում գրողն արժարծում է հոգու
«պարապության» հերքումն՝ մարդկային դժբախտության գաղափարը: Պարմ-
վածքը հարուստ չէ գործողություններով ու կերպարների բազմազանությամբ,
սակայն այս հանգամարը չի խանգարում րեսներու հոգեբան ու գեղագետ Շահ-
նուրին: Գարեգինը, որ պարմվածքի առանցքային կերպարներից է, ապրում է
«փոքր» մարդու բարդույթը: Նա անդիմացի՞ծ ու թույլ տղամարդ է՝ կնոջ ձեռքին
խամաճիկ: Շահնուրը, թերեւս նկարի ունենալով Գարեգինի մարդկային հար-
կանիշները, նրան համարում է «փոքրակազմ»: Իսկ խոսելով տղամարդուն
տղամարդ պահող բեղերի մասին՝ այսպէս է գրում. «Պիտեր կան, որ ըսել կ'ուզեն
սա. պիտեր կան, որ ըսել կ'ուզեն նա. իսկ մարդուն գուցահեռական թաւ պիտերը
կ'ըսեն մէկ բան - մագի խորձ եմ»³¹: Նրա կինը՝ Անժելը, քաղքենի, գոեհիկ ու շա-
համով արեւելցի է: Սակայն նրա ամենից սարսափելի որակը ստախոսությունն
է. այս հայտիին դավաճանում է ամուսնուն հանուն շահի: Ամուսինն իր տեղում
չէ, իսկ կնոջ սիրեկանը՝ Վահրամը, եկել է, որպէսզի լցնի այդ բացը, «պարա-
պը»: Այսպէղ խնդիրն առարկայականից առավել՝ հոգեբանական է: Պարմույթ-
յունը հիշեցնում է մեծ երգիծաբան Նակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար»
պիեսը: Տարբերությունն այն է, որ Պաղտասարը թեկուզ ուշ, բայց հասկանում
է իր խաբված լինելը եւ կնոջ, եւ բարեկամի կողմից, փորձում է «վրեժ լուծել»,
մինչդեռ Գարեգինը, երբ արդեն պարմվել էր անբարո կնոջ դիմակը, տարակու-
սում է ապրակել նրան, թե ոչ: Ինչը եւ համարձակորեն կարարում է Վահրամը.

30 «Մենք», թիւ Դ.-Ե., էջ 249 (տե՛ս Շ. Շահնուր, Պճեղ մը անուշ սիրտ):

31 «Մենք», թիւ Գ., էջ 132 (տե՛ս Շ. Շահնուր, Պարապ սենեակի պարճառաւ):

«Յաղթանդամ եւ գինով Վահրամը շառաչուն ապրակ մը իջեցուց Անժէլին: Յետոյ երկրորդ մը անկի գօրատը, երրորդ մը, չորրորդ մը: Ծանրաբեռնուած սեղանը շրջեցաւ աննկարագրելի ջախջախումով եւ կինը ինկաւ նստարանին վրայ: Վերջն ալ տակը»³²: Անպարկառ կինը «պարտված» գեպնին է ընկնում՝ դրանով ազատություն տալով եւ Վահրամին, եւ Գարեգինին:

«Մենք»-ի կարեւոր ձեռքբերումներից էր գրական վերլուծությունների բաժինը, որ կոչվում էր «Գրականության եւ արուեստի լրատու»: Այսպեղ փարիզահայ գրողները քննության էին ենթարկում եւ՝ հայ, եւ՝ համաշխարհային գործեր: Գուցե նրանց գնահատություններն ինչ-որ առումով սուրյնկարիվ էին, ծայրահեղ, սակայն կարեւոր էին Կոմյունիստական հասարակարկում գրական որոշակի մթնոլորտ ստեղծելու, օր օրի զարգացող աշխարհի հետ համընթաց քայլելու համար:

Պարբերականի այս բաժնում տարբեր գրական հանձնառությամբ հանդես էին գալիս եւ Շ. Շահնուրը, եւ Վ. Շուշանյանը: Երկուսն էլ իրենց հախառն բնավորությանը համարժեք գրաքննադատական հոդվածներով էին ներկայանում:

Վ. Շուշանյանն, օրինակ, անդրադարձ է կատարել Կոստան Զարյանի՝ 1930 թվականին Բոստոնում լույս տեսած «Տարրագոմի հարսը» պոեմին: Նա սուր քննադատության է ենթարկում նշանավոր այս սրբազանագործությունը՝ համարելով, որ գրվածը «մութի ընդարձակ գիշություն մըն է պարզապէս»: Նախկանշականն այն է, որ նույն կրթով Վ. Շուշանյանը ծառանում էր նաեւ «Պոյնուզներ»-ի դեմ: Երկու սրբազանագործության հիմքում էլ հեղինակներն ազգային-ազատագրական պայքարի գաղափարից զատ քննում էին մարդուն՝ առավելություններով ու թերություններով: Նրանց նշանառության տակ էր ոչ թե հայի, այլ մարդո՛ւ ճակատագիրը: Զարմանալի է, որ Վ. Շուշանյանը, սփյուռքահայ գրականության մեջ լինելով կնոջ հոգեաշխարհի լավագույն «մեկնիչը», շրջանցում է, չի նկատում Սանայի կնոջական ողբերգությունը: Ինչի՞ց է, որ արձակագիրը չի որսում պոեմի ենթախորքում քննվող հարցադրումների սրությունը: Մեր կարծիքով, անցելատույզ գրողն ազգայինը ենթակայական քննության տակ է առնում եւ կորցնում է կերպարի ներանձնական յուրահասկությունները:

Ըստ Վ. Շուշանյանի՝ Կ. Զարյանի համար Արեւմտյան Նայաստանը «աշխարհագրական տախտակի կտոր մըն է», եւ նա «օտար մըն է, որ կեցած է մեր ցաւի ընդարձակ տարածութեան դիմաց՝ կ'ապաւինէ իր բառերուն գեղեցկութեան, մեզ խաբելու համար»³³: Իհարկե, պոեմի մասին այս հայեցողական խոսքը խիստ ծայրահեղ է, այսպեղ պակասում է Շուշանյան գրողի շրջահայացությունը:

³² Անդ, էջ 145:

³³ «Մենք», թիւ Ա., էջ 49 (տե՛ս Վ. Շուշանյան, «Տարրագոմի հարսը» Կոստան Զարյանի):

Գրականության խոշորագույն պատմաբան Հակոբ Օշականը եւս, որը մինչև 10-ական թվականների կեսերը ջերմ գործակցային հարաբերությունների մեջ էր Կ. Զարյանի հետ ու բարձր էր գնահատում նրա սրբազանգործական հմտությունները, իսկ ահա 20-ական թվականներից ու գրեթե երկու քառամյակ շարունակ նրանց միջև արմատացել էր անհանդուրժողականության վիճակ, 40-ական թվականներին, սակայն, արդեն Վ. Շուշանյանից հետո, խափվ քննադատում է «Տարագոմի հարսը» պոեմը: Նա, ճիշտ է, ճիշտ Վ. Շուշանյանի պես, գտնում է, որ Կ. Զարյանը լավ չի պարկերացնում այն «երկիրը», որը պոեմի գործողությունների բուն միջավայրն է: Առհասարակ չի հավատում Սանայի՝ նահապետական հայ կնոջ հանգամանքին եւ հայրաբարում է. «Միամտութիւն է առնուազն հայ աղջկան բերնին մեջ դնել աշխարհիկ փարիզուհիի մը զգայական ամենէն թիփիք բանաձեւը եւ ըսել Կալ անոր անկարելի նախադասութիւնը. «Ես սիրեցի, մեղք է սիրել»³⁴:

Վ. Շուշանյան - Կ. Զարյան բախմանն արժեքավոր հոդվածով է անդրադարձել Վարդան Մաթեոսյանը³⁵: Նա համոզմունք է հայտնում, որ խնդրի ակունքը օտարագիր գրող Վահրամ Կաթավյանի (Վիկտոր Գարդոն) «Հարդգող» խմբակցության ասուլիսներից մեկում Կ. Զարյանի դեմ կարդացած զեկուցումն է: Սրան հաջորդում է Զարյանի դժգոհություն-բողոքը՝ ուղղված Շավարշ Միսաքյանին: Նա «Փարիզի փողոցը» համարում է «Մեն Միշելի թափառաշրջիկ-գրչական»:

Իսկ ավելի ուշ, 1932 թվականին, իր «Նավարումար թիվ 20» գրության մեջ խտրագույն քննադատում է «Մենք» գրական երեսույթն ընդհանրապես, փարիզահայ գրողներին ու Նահանջի գրական ուղղությունը: Նա գրում է, որ «չես գտնում ո՛չ մի կենդանի գաղափար, կյանքի տեսիլքը նորոգող, ո՛չ մի հանդուգն կերպավորում, ցեղի թաքնաթաքուր գանձից դուրս պոկած ո՛չ մի նոր նիզակ, որով կարելի պիտի լիներ մարտնչել մեր գլխին կախված անողորմ ճակատագրի դեմ»³⁶:

Ինչ խոսք, Կ. Զարյանն առաջին բնորոշման դեպքում խիստ ենթակայական ու գրողների անձը վիրավորված տեսնելու դիրքերից է հանդես եկել: Իսկ երկրորդի պարագայում կարծես չի նկատում Նահանջի գրականության բերած «օգուտ-

34 Բ. Թաշեան, Մայրիկներու շուրհն Կալ (գրոյց Յ. Օշականի հետ), Պէյրութ, Ն. Օշականը քննադատության տարն ուղղում է «Տարագոմի հարսը» պոեմի դեմ «Համապարկեր» սովորաբար աշխատության մեջ: (տե՛ս՝ Յ. Օշական, Համապարկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, 1982, էջ 413-414):

35 Վ. Մարթէոսեան, Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ, Անթիլիաս, 2009: (տե՛ս «Վազգէն Շուշանեան եւ Կոստան Զարեան» հոդվածը, 162-170 էջ):

36 Կ. Զարյան, Նավարումար, Երեւան, 1999, էջ 341-342:

ները»: Նա չգիտի, թե որն է «Մենք»-ի փղաների գենը, որով պայքարելու են ուժացման դեմ:

Այս գրության մեջ Կ. Զարյանը, նկատի առնելով Նահանջի փղաներին, այն միտքն է արտահայտում, որ Փարիզի հայ գրողներն իրենց գրչեղբայրների դեմ ցեխ են շարվում, «ամենատոսկալի նախապիներով» ներկայանում: Այսպես քննադատում է նաև այս ամենը վերահսկողներին ու գրում. «Ու ֆրանսիական գրական մարտիկի փափաստաններում արածող ոչխարները, ու որբերի ակամա դժբախտությունները շահագործող խորամանկ փիպարները՝ չփեսնելու են ձեռանում եւ վարորեն լռում»³⁷:

Եզրահանգում կատարելով՝ գրողը հարց է ուղղում ընթերցողին. «Ինչո՞վ ենք մենք ներկա այս աշխարհում»³⁸: Պարասխանը թերևս բխեցնենք հոդվածի ներքին բովանդակությունից՝ ազգայինով:

Անդրադառնալով Կոստան Զարյանի եւ «Մենք»-ի փղաների սրված հարաբերություններին՝ Ա. Ծառուկյանը գրում է, որ Կ. Զարյանի ընդգծված ցուցադրական «ցեղապաշտությունը» հասնում է «մոլեռանդության»: Լիբանանահայ գրողարքը գրում է. «Բայց հող եւս գերին դարձած էր թափերական իր խառնուածքին, անիմանալի սովետությունամբ մը կը փարուէր բարձրէն փեսնելու Նայութիւնը եւ Նայ կեանքը»³⁹: Նրան «զայրացնում է» այն, որ Կ. Զարյանը իրեն վեր է դասում սփյուռքահայ գրչեղբայրներից, իր իսկ բառերով՝ «Չարեանին վայել չէ այս խաժամուժին մէջ մտնել: Ապողոնին կը մնայ իր բարձունքէն պարզամել»⁴⁰:

Ա. Ծառուկյանը փաստում է, որ Կ. Զարյանը Վ. Շուշանյանի մասին այսպես է արտահայտվել. «Շուշանեան, ո՞վ ես դուն, մագերող մէջ ոջիլներ...»⁴¹, ու գրում է, որ նրանց հաշիվները գոհեցության առումով այլևս հավասար են (նկարի ունի «Տարագոմի հարսը» պոեմին փրկված գնահատանքը - Լ. Տ.): Սակայն, մեր կարծիքով, Կ. Զարյանն անցել է բարոյականի սահմանը՝ Վ. Շուշանյանի երեսին շարվելով որբի, աղքատի, անհույս անտունի կարգավիճակը:

«Գրականութեան եւ արուեստի լրատու» բաժնում Վ. Շուշանյանը հանդես է եկել նաև Ղեւոնդ Մելոյանի «Երեք ընկերները» երկի մասին գրախոսականով: Հոդվածագիրը նշում է գրքի եւ՝ դրական, եւ՝ բացասական կողմերը: Ինչպես Կ. Զարյանի դեպքում, այսպես էլ Վ. Շուշանյանը խիստ է, երբեմն զայրացկոպ ու այս դիպանկյունից էլ առավել մանրամասնությամբ ծառանում է գրքի «թերություններին» դեմ: Նա գրում է. «Չենք կրնար համառօտագրել ո՛չ դիպախաղը

37 Անդ, էջ 343:

38 Անդ, էջ 344:

39 Ա. Ծառուկյան, «Մենքը եւ... միասնոր», Պէյրոթ, 1992, էջ 289-290:

40 Անդ, էջ 290:

41 Անդ, էջ 291:

- եթե կայ - ոչ ալ պատմությունը՝ որ այսպեղ դժուարությամբ կը փեղատորուի որևէ ազգային շրջանակի մեջ, նոյնիսկ ժամանակի այս կամ այն կտորին»⁴²: Վ. Շուշանյանը գտնում է, որ չնայած Ղ. Մելոյանի լեզուն փարօրինակ է, բայց, այնուամենայնիվ ընթերցողին հորդորում է չվախենալ նրա «որձեւէգ բնատրու-թիւնից» ու կարդալ այս գրվածքը:

Ինչպես դիպուկ նկատել է Պ. Սիմոնյանը «Մենք»-ի մասին հոդվածում, «Վազգէն Շուշանեանի անդրադարձները ժամանակակից գրական հարցերու եւ գիրքերու մասին, գրականագիտական մօտեցումներ եւ ատելի, փառաբանաբար դպրոցին կը պատկանին»⁴³: Իսկապես էլ, արձակագիրն այս դաշտում «գործում է» առաջնային փառաբանության թելադրությամբ: Նա հանդես է եկել փոքրիկ գրախոսություններով ժ. Դյուիհամելի, Ա. Պուշկինի, Տ. Ռյազանովի սրել-ծագործությունների մասին: Օրինակ՝ ժ. Դյուիհամելի «Բանաստեղծություններ՝ ամերիկեան բանուորներու» գրքի արժանիքների մասին խոսելիս կարեւորում է այն, որ գրված է «առօրեայ ամերիկեներէնով»⁴⁴: Շուշանյանը գտնում է, որ աշխարավոր դասակարգը եւս կարող է գրական դաշտ մտնել, թեկուզ իր «հանապա-գօրյա աշխարհային» գովերգումով: Գրողը եզրակացնում է, որ այս գրականությունը կարող է փոխալ «բազմաթիւ քաղքենի մրցակցութեան»⁴⁵: Այսպեղ, անշուշտ, պիտի նկատել իր անձնական շահագրգռությունը՝ աչքի առաջ ունենալով Ռեյնոյի մեքսիկացի գրող Կարանի սեւագործ բանվորին:

Ռուսական վիթխարածավալ գրականության մեջ իր ծանրակշիռ, կարեւոր ու գեղեցիկ խոսքն ասած Ա. Պուշկինի մասին չափազանց ծայրահեղ ու ենթակայական գրախոսականով է «Մենք»-ում հանդես եկել Վ. Շուշանյանը: Անհասկանալի է գրողի գայրալի, ցասկոյր խոսքի ենթադրեքստը: Նա ռուս գրողին անվանում է «խառնածին» ու նրա գրական վաստակը չափում միայն «Յեղափոխական բանաստեղծություններ» ժողովածուով: Կարծում է, որ Պուշկինն այս գրքում անտեսում է հասարակ, աշխարավոր մարդուն ու իր գրականության նյութ դարձնում «մերկ ու լաւ սնած դմակներով» փրկկանց: Գրողը գտնում է, որ Պուշկինը քաջություն չի ունեցել ամբողջովին հեղափոխական դառնալու, եւ գրում է. «Ու ամբողջ գրքին էջերէն կը պայթի գէշ ցաւ մը իր դարուն ստոր կեանքին դիմաց»⁴⁶:

Մինչդեռ «Մենք»-ի նույն թվի մեջ՝ Վազգէն Շուշանյանը ֆրանսիական «Տասներկու բանաստեղծներ» գրքի առիթով գրված նյութում, առավել հանդուր-

42 «Մենք», թիւ Ա., էջ 50:

43 «Հայկազեան Հայագիտական Հանդես», էջ 221 (տե՛ս Պ. Սիմոնեանի նշված հոդվածը):

44 «Մենք», թիւ Ա., էջ 59:

45 Անդ, էջ 60:

46 «Մենք», թիւ Բ., էջ 119:

ժող է, նույնիսկ կարելի է ասել, համակրական վերաբերմունք է դրսևորում. «Այս փաստերկու բանաստեղծները, իրենց երկրին մեջ ուր դեռ կը յամենայ քաղցր փրկմանը մը, յեղափոխութեանց ու թափուած արեան յիշարակը, անշուշտ ատերաբեր թռչուններ են վաղուան»⁴⁷: Երիտասարդ գրողների առաջին գրչափորձերի հանդեպ ներողամտություն է ցուցաբերում՝ գտնելով, որ դեռ «անոնք չունին բիրտ ու դաժան իրականութեան անմիջական զգացումը»⁴⁸:

Շահան Շահնուրն այս բաժնում հանդես է եկել Կ. Ֆերերի «Լորի» սպեկտակուլարության մասին քննադատական ակնարկով: Այսպես փեսնում ենք Շահնուրի նուրբ հումորը, որպեսզի ես պիտի որսալ նրա ասելիքը: Սփյուռքահայ արձակագիրը արհամարհալից ու ծաղրալի խոսքով է պարասխանում ֆրանսիացի Պիեր Լորիի թրքասեր հարցադրումներին: Շահնուրին հունից հանում է այն, որ նա անհուն ցավով է խոսում թուրք ժողովրդի «կոտորածի» մասին ու հեզնախառն ծաղրով, իբրև թե զարմացած, գրում է. «Ո՛հ, ի՛նչ կ'ըսեք, Աստուած իմ, ո՛ր փեսնուած է այս փեսակ հրէշութիւն, բարբարոսութիւն, անօրէնութիւն, գազանութիւն...»⁴⁹: Այնուհետև, ամփոփելով ակնարկը, դիմում է իր գրական կերպար, ներքին ես Նամբարձումին. «Ի՛նչ ըսիր, Նամբարձում. քֆրե՛մ, կ'արժէ՛»⁵⁰: Նապականչականն այն է, որ երբ Շ. Շահնուրը դժվարանում է ինքնուրույն որոշումներ կայացնել, խարխալում է անորոշության ու անհայտության մեջ, դիմում է Նամբարձումին, որը կարծես իրեն ուժ է փալիս:

Ինչո՞ւ «Մենք» հանդեսը երկար կյանք չունեցավ: Այս առիթով սփյուռքահայ գրագետ Դալար Մահրուքյան-Շահինյանը գրել է. «Մենք»-ի աշխարանքը, ինչպես կը պարզուի պարբերաթերթի առաջին էջէն, նախընտրութիւնը կը դնէ իւրաքանչիւր գրողի անհատականութեան վրայ, փոխանակ այդ անհատականութիւնը ստորադասելու խումբի յստակ եւ կիզակէրային գաղափարախօսութեան մը»⁵¹: Յուրաքանչյուր գրող ինքն էր միակ երաշխավորը իր գրվածքի, խմբագրակազմը ոչ մի պարասխանաբանություն չէր կրում, ինչը եւ բացառում էր առողջ գրաքննությունը: Սա վկայում է այն մասին, որ գաղափարների համերաշխություն էր բացակայում:

Մեր կարծիքով, թերեւս բազմաթիվ պարճառներից մեկն էլ հետեւյալն է. այս խմբակի շուրջ հավաքված երիտասարդ, ավյունով լի փղաները չցանկացան

47 Անդ, էջ 124:

48 Անդ:

49 Անդ, էջ 121:

50 Անդ:

51 «Բազմալեզ», Վենետիկ-Մ. Ղազար, 2006, ՃԿԴ. փաթի, թիւ 1-4, էջ 444 (փեսն Դ. Շահինյան-Մահրուքյան, «Մենք» խմբաւորումը եւ սփյուռքահայ գրականութեան սկզբնաւորութիւնը» հոդվածը, էջ 442-460): Հոդվածագիրն արդյո՞ք չի ուշացնում սփյուռքահայ գրականության սկզբնաւորումը կապելով «Մենք»-ի հետ:

իրենց անհատականությունը սպորադասել համընդհանուր շահին: Նրանք չկարողացան բարձրանալ իրենց ես-ի դիրքերից, չկարևորեցին այն, որ ես-ը պիտի նպաստի բերել միասնական գործին:

«Մենք»-ականները հակված էին բացառապես դեպի ապագան, սակայն արդյո՞ք հնարավոր էր առանց անցյալի ու ներկայի շաղկապել ժամանակները: Փարիզի «պղաներից» յուրաքանչյուրը ինդորի լուծումը յուրովի էր պարկերացնում. «...ամեն վերապրող իր անցեալն ու ներկան միացնելու կամ հեռացնելու անձնական պայքարը կ'ապրի, ազգային նոր գրականության մը շուրջ համախմբումի եւ համերաշխության գաղափարը կը թուի հեռահաս, եթէ ոչ անկարելի»⁵², - դիպուկ նկատում է Դ. Շահինյան-Մահրուջանը:

Վ. Շուշանյանը դեռ 1930 թ. անդրադարձել էր անցյալի ու ներկայի այս բախտուն հարցին: Նա գրում էր, որ միայն ներկան ապագային օղակելով՝ շղթա չէս կարող կազմել, եւ որ ապագան անցյալի կրկնությունն է, ու հետագա հաջող ընթացքի համար դասեր պիտի վերցնել անցյալից. «Ոմանք կը կարծեն թէ ներկան կը բաւէ ապագային սպասելու համար, մինչդեռ բոլորս ալ կը նմանինք յօդուածորանիներու, որոնց մարմնին օղակները ամեն հասակի հետ պիտի շարունային: Մեր մարմինը մեր հանգուցեալ բո՛լոր օրերուն դամբարանն է ու կանք որովհետեւ եղած ենք»⁵³: Անցյալը, այսինքն, գերիշխում է: Փաստորեն, սա միակ ճշմարիտ ելակետն է, որ պաշտպանում է Շուշանյանը:

Գրականությունը ներդաշնակ ու ամբողջական է անցյալով, ներկայով ու ապագայով: Ժամանակային բնական ընթացքից շեղումներն են, որ խռովությունների ու բախումների են հանգեցնում, ինչը եւ փրկի ունեցավ «Մենք»-ի պարագայում:

«Մենք»-ը, սակայն, կը մնայ յարկանշական երևոյթ. անոր երևումը 1931-ին իր հետ կը բերէ հակասութիւններու ամբողջ թնճուկ մը եւ ասոր համար ալ իր ժամանակին մէջ կ'առնէ եզական արժէք»⁵⁴, - այսպէս է դատում Գրիգոր Պըլլըրյանը: Նիրավի, «Մենք»-ը հանդես եկավ մի առաքելությամբ, որ կարող էր շրջել ամբողջ սփյուռքահայ գրականության սրեղծագործական հունը: Սակայն որքան շոնդալից եղավ նրա մուտքը գրական ասպարեզ, նույնքան աղմկոտ եղավ իրեն վերապահված խոսքի դաշտի լքումը:

Ժամանակի մամուլը, իհարկե, անդրադարձավ «Մենք»-ի եւ՝ «գալուն», եւ՝ «գնալուն»: Նանդես եկավ մասնավորապես դաշնակցական մամուլը, երբ արդեն փեսանելի էր, որ գրական այս գործընթացը երկար կյանք չէր ունենալու:

⁵² Անդ:

⁵³ Վ. Շուշանյան, Ամբան գիշերներ (երկրասարդ, անոթ մարդու մը թղթերէն), Գահիրէ, 1930, էջ 105:

⁵⁴ Գ. Պըլլըրյան, Տրամ, Պէյրուս, 1980, էջ 321-322:

«Մարտկոց»-ը կարեւորեց «Մենք»-ի գոյությունը սփյուռքահայ իրակա-
նության մեջ, որ արեւմտահայության վերջին սերնդի ճիգն էր. «Մենք» ջերմ ու
մոլեկան երիտասարդութեամբ մը ճամբայ ելած էր շարժում մը սրելով, նժդեհ
արեւմտահայութեան վերջին սերունդին կեդրոնախոյս այլ մերթ աղուոր ճիգե-
րէն ընդհանուր գրական վերելք մը պատրաստելու եթէ ոչ սպոյճ՝ գէթ թաքուն
պրամադրութեամբ»⁵⁵: Սակայն թերթը «պարպություն» համարեց «Մենք»-ի
Դ. Ե. համարների համարելը հրապարակությունը:

Ազգայնական դիրքերից հանդես եկող ու ավագ ընկերներին կտրուկ հա-
կադրվող, երիտասարդ դաշնակցականների ամբիոն «Մարտկոց»-ը հարկա-
պես քննադարեց «Մենք»-ի «Հարուած» բաժինը, որպէս ֆրանսահայ գրող-
ները հանդես էին գալիս իրենց գեղարվեստական սրելծագործություններով:
«Մարտկոց»-ականները պարբերականի այս հարվածը դիտեցին ավելորդ
ու անարյուն՝ հարկապես Շահան Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ» գեղեցիկ
պարմվածքի փազգործմից հետո: Նրանք անպէտքի համարեցին պոլսահայ ծեր
կնոջ «այդ համակրելի շաղփաղփումին վերաբարադրութիւնը»⁵⁶: «Մենք»-ի Գ.
համարում լույս տեսած իր «հակաազգային» գաղափարախոսությամբ աղմուկ
հանած «Պոյնուզըները» պարմվածքը համարեցին «ծանր վրէպ»⁵⁷:

Նայրնի է, որ Շահան Շահնուրը հեռու էր խմբավորումներից եւ աշխատում
էր հնարավորինս գերծ մնալ որեւէ գաղափարախոսության ջարագով լինե-
լուց: Այս առումով նրա կյանքում բացառություն են կազմել «Հարդգող» գրական
խմբակցությանը (1927) եւ «Մենք»-ին (1931) անդամակցությունը: Վերջինիս
առիթով գրողի փված գնահատանքը հակասական է եղել: «Զոյգ մը կարմիր
տերրակներ»-ում կարեւորում է «Մենք»-ի բերած գրական նոր շունչը՝ գրելով, որ
համախմբվածների միջև ներդաշնակություն ու ներքին կապ կար. «Ոգի բառը,
որ իմաստ չունի, բայց որ այնքան դիրքութեամբ կ'ըմբռնուի, այս պարագային
կը նշանակէր նուագագոյն ներդաշնակութիւն ընդմէջ գրչի մարդոց, որոնք բերքը
չեն նոյն երկրամասին, որոնք չեն շնչած գրական նոյն մթնոլորտը, ինչպէս եղած
էր Պոլսոյ մէջ: Կազմուած էր նո՛ր մթնոլորտ մը, մեծ մասամբ Շ. Մ.ի (Շավարշ
Միսաքյան - Լ. Տ.) հիւրընկալութեան: Այս բոլորը այնքան ճիշդ է, որ մինչեւ այ-
սօր ոմանք կը գործածեն սա ասութիւնը - «Փարիզի փղաքը», ի չգոյէ լաւագոյն
փարագի մը»⁵⁸:

Մինչդեռ Գր. Քյոսեյանի հետ գրույցում արտահայտում է այս փեսակերին
հակադիր դիրքորոշում. «Մենք»-ը ձախողանք մըն էր: Ես որեւէ ընկերակցու-

55 «Մարտկոց», Փարիզ, 1932, Նոկտեմբեր 29, Ա. փարի, թիւ 16:

56 Անդ:

57 Անդ:

58 Շ. Շահնուր, Զոյգ մը կարմիր տերրակներ, Պէյրութ, 1967, էջ 81:

թեան մաս չեմ կազմած ու վստահություն ալ չունիմ: Այդ շրջանին հիսանդ էի եւ կը մեկնէի արձակուրդ մը առնելու համար: Մեկնումիս նախօրեակին Նարդունին պնդեց որ մաս կազմեմ խումբին: Տուի գրություն մը եւ վերադարձիս ակամայ սրանձնեցի նաեւ խմբագրի պաշտօնը, օգնութեամբը Նշան Պէշկեթաշեանի (նկարի ունի վերջինիս համոզելու գործուն - Լ. Տ.), որովհետեւ խումբին մէջ շարքեր իրարու հետ համաձայն չէին եւ թերթը մնացած էր առանց խմբագրի»⁵⁹:

Պարբերականի ներքին կյանքում ամեն ինչ չէ, որ հարթ էր: Այսպէս էր հենց անձնային շահը բախվում ընդհանուրի փեսականին: Խմբակցության անդամներից շարքերը հաճախ թշնամանում էին: Շահնուրը վկայում է. «Շուշանեան, օրինակ, կ'արէր Նարդունին»⁶⁰: Իսկ ահա Շ. Նարդունուն ուղղած շահնուրյան հարցը, թե արդյո՞ք Շուշանյանը որեւէ հասուն փարիքի գործ ունի գրած, Նարդունին պատասխանում է. «Անարժէք մարդ է. անկէ բան դուրս չի գար»⁶¹:

Այսուհանդերձ, «Փարիզի փողոց» ամենասուր հակամարտությունը մնում է Շահնուրի ու Շուշանյանի միջեւ:

Եւ ժամանակի, եւ ավելի ուշ շրջանի քննադատության նյութ դարձավ այն փեսակերը, թե «Մենք»-ի շուրջ հավաքվածները հակաազգային ու նահանջողական գաղափարներով են փոգորված: Գ. Սեւանը շարք ավելի ուշ նկատում է, որ ներհակ քաղաքական ըմբռնումներով, գրական ուղղության եւ ճաշակի հակադիր խաչաձեւումով հանդերձ՝ «...«Մենք»ի անդամների համար ընդհանուր էր ընդվզումը դեպի այն թթու ազգայնամոլ շրջապատը, որ սնել էր նրանցից շարքերին»⁶²:

Մեր կարծիքով՝ ճիշտ չէ «Մենք»-ի անդամների միասնությունը փեսնել նրանց՝ իբր ոչ ազգայնական կեցվածքի դեմ: Այդ միասնությունը ավելի ճիշտ կլինի գնահատել գեղարվեստական դաշտի վրա. մեր գրականության վաղվա օրվա նկարմամբ ազնիվ մրահոգությունն էր, որ համախմբել էր նրանց: Ուստի սխալ է «Մենք»-ի փղաների ինքնության ձգտումը համարել «փքուն ոճ» եւ մեծամտության հովի վկայություն⁶³:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք «Մենք» գրական հանդեսի դերը Շ. Շահնուրի եւ Վ. Շուշանյանի գրական-գեղարվեստական մրաժողության համակարգում, պետք է ընդգծել, որ, հակառակ իր կարճատև ընթացքին, պարբերականը լուրջ դերակատարություն ունեցավ նրանց գրողական հետագա զարգացման վրա՝ մեկը հեռացնելով, մեկը մերձեցնելով անհարակաճությունները, անգամ գրական ճակատագրերը: Վ. Շուշանյանի համար այն հրապարա-

59 Գ. Քեօւէնան, Գիր եւ գիծ, Պոստոն, 1998, էջ 84:

60 Անդ:

61 Շ. Շահնուր, Նամակների, Կ. Ա., Ութերթաւոն, «Mayreni Publishing» հրատ., 2001, էջ 83:

62 Գ. Սեւան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1920-1945), էջ 35:

63 Անդ:

կախոսական, քննադատական, ինքնարտահայտման հարթակ հանդիսացավ, իսկ Շ. Շահնուրի համար՝ գեղարվեստական աճի հենք: Չնայած Շ. Շահնուրի հայրնի թերահավատությանը՝ «Մենք»-ը փարիզահայ մի խումբ երիտասարդ մրավորականների միասնական ու լուսավոր փեսականի արդյունքը դարձավ, որը տարբերվում էր իր լրջմիտ, իմացական ենթախորքով՝ ողջ սփյուռքահայ գրականության պարմության մեջ:

SUMMARY

In the 1930s a literary movement called the direction of Retreat was formed in Paris. “Menq” magazine became its voice. The magazine gathered around young writers with different literary taste. French-Armenian writers put aside their inner conflicts and signed under “Menq” magazine. This very step was to save not only Diaspora but also Armenian literature. Pioneers of two opposite poles, Shahnur and Shushanyan, were the former members of “Menq”. This was probably the only place where you can see Shahnour and Shushanyan together. The magazine became a unique platform for writers, where they made a serious artistic and critical articles. It opened a fresh and realistic look at the literature of the Diaspora.

РЕЗЮМЕ

Сформированное в 1930-х годах в Париже литературное движение получило название “Направление отступления”. Его рупором стал журнал “Менк”. Вокруг него объединились молодые силы с совершенно разным литературным вкусом. Французские писатели армянского происхождения забыли имеющиеся между ними внутренние противоречия и подписались под манифестом “Менк”. Своим шагом молодые парни хотели “спасти” армян диаспоры и зарубежную армянскую литературу. У истоков “Менк” стояли лидеры двух противоположных полюсов литературы армянской диаспоры Ш. Шахнур и В. Шушаниян. Это, пожалуй, единственное пристанище, где можно увидеть Шахнура и Шушанияна бок о бок. Журнал стал своеобразной платформой для писателей, где они выступили с серьезными художественными и критическими статьями. Он открыл свежий и трезвый взгляд на литературу армянской диаспоры.